

ՀԱՅՆԵՐՆԵՐԻ ԹՈՒՐՔԵՐՆԵՐՆԵՐ ԱՆՑԱԾ ՆՈՐԱՀԱՅՏ
ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Շուտով լրանում է մեկ հազարամյակ այն օրից, երբ թուրքական առաջին քոչվոր ցեղերը հայտնվեցին Հայկական լեռնաշխարհում: Բնականաբար այդքան ժամանակ էլ թուրքերենի և հայերենի մերձեցումների պատմությունն է կազմում: Հարևանության մեջ գտնվող լեզուները չեն կարող խուսափել փոխառություններից, սակայն, երբ լեզուներից մեկը պարտադրողն է, այսինքն՝ նվաճող լեզուն է, ապա փոխառությունների չափը երկուստեք, բնականաբար, տարբեր է լինում: Եթե հայերի համար թուրքերենը պարտադիր-պաշտոնական պետական լեզու էր, և հայերենը չէր կարող խուսափել թուրքերենից կատարվող փոխառություններից, ապա թուրքերենը, որպես տիրող լեզու, այս տեսակետից ազատ էր և հարկադրական պայմաններում չէր: Ուստի առաջին հայացքից տպավորություն է ստեղծվում, որ այն կարող էր չենթարկվել հայերենի ազդեցությանը: Սակայն նման տպավորությունը սոսկ առերևույթ է ու խաբուսիկ: Որքան էլ թուրքերենը խուսափել է հայերենից տերմիններ փոխ առնելույ և փոխառության կարիքի դեպքում առաջին հերթին դիմել է արաբերենին ու ֆարսերենին (պարսկերենին), այնուամենայնիվ նրան չի հաջողվել զերծ մնալ հայերենի ազդեցությունից և այսօր նրա գրական լեզվում և բարբառներում հարյուրավոր հայերեն բառեր կան, որոնց գդալի մասը անփոխարինելի է այլ համարժեքներով:

Բնակլիմայական նոր պայմանները, քոչվորությունից նստակեցության անցնելու նոր կենսաձևը, ինչպես նաև տնտեսական նոր հարաբերությունները աստիճանաբար օսմաներենի և ապա թուրքերենի բառապաշարում հանգեցրին նոր հասկացողությունների և տերմինների ի հայտ գալուն: Իհարկե այդ նույն ընթացքն

էլ տեղի էր ունենում հայերենում, քանի որ նոր տիրապետողների պարտադրած վարչատնտեսական կացութեանը նոր տերմինների և հասկացողութունների համար ստեղծել էր նոր բառերի փոխառութեան պայմաններ։ Այնուամենայնիվ, ընդ թուրքերենի, թե՛ հայերենի համար երկուստեք կատարվող փոխառութունները երկու մակարդակով էին տեղի ունենում ժողովրդախոսակցական և գրական-գրեգային։ Վերջին հաշվով, զրական լեզուներ թափանցած բառերի ակունքը ժողովրդական-խոսակցական լեզուն է, այսինքն՝ կենդանի մերձեցումների, շուկայական հարաբերութունների միջոցը, որը ազատ է հսկողութունից և, բնականաբար, ենթակա է հախուռն ներդրածութեան։ Մինչդեռ դրական լեզուները զուսպ են հախուռն ներթափանցումների հանդեպ։ Ժողովրդախոսակցական լեզուների բառապաշարից հազվադեպ են դիմում փոխառութունների։ Այս իսկ պատճառով էլ որևէ լեզվի ազդեցութունը մեկ այլ լեզվի վրա ճիշտ դնահատելու համար սխալ է միայն դրական-դրթային փոխառութունների վրա հենվելը։ Գրական լեզու թափանցած բառապաշարը միայն սառցալեռան վերջրյա մասն է, մինչդեռ աներևութ ստորջրյա մասում է մնում հիմնական բառապաշարը, այսինքն՝ տերիտորիալ (տարածքային) խոսակցական լեզուներին՝ բարբառներին անցած բառերի քանակը։ Այս է հիմնական պատճառը, որ թուրքերենի բառարաններում հայերեն փոխառութունների քանակը իրականութեանը չի համապատասխանում։

2. Աճառյանը դեռևս 1902 թ. ուսումնասիրութուն է հրատարակել «Թուրքերենի ազդեցութունը հայերենի վրա. թուրքերենէ փոխառյալ բառերը հայերենի մեջ»¹ վերնագրով, ուր խոսում է հայերենի մեջ ներթափանցած 4,000 թուրքերեն բառերի մասին, որոնցից դործածական է համարում 170-ը, իսկ դրականին անցածների թիվը կարծում է, որ 20-ից էլ չի անցնում²։

Հաճախ ենք նկատում, որ մեծ մասամբ ուսումնասիրվում են օտար լեզուներից հայերենին անցած փոխառութունները, սակայն հակառակ երևութը՝ հայերենի թողած ազդեցութունը այլ լեզուների վրա, քիչ է ուսումնասիրվել։ Ծիշտ է, դեռևս անցյալ դարի կեսերից հայկական պարբերական մամուլում սկսում են հրապարակվել այս կամ այն բնակավայրում հայերից թուրքերին անցած բառեր, սակայն ամբողջական որևէ ուսումնասիրութեան փորձ չի

արվել: Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում» ի մի են բերված հիշյալ՝ միայն մամուլում հրապարակված հայերեն բառերը, որոնք գործ են ածվում թուրքերենի այս կամ այն բարբառներում³:

Մի կողմ թողնելով վիճահարույց բառերի հարցը՝ մենք ներկա հոդվածում կանդառադառնանք անվիճելիորեն հայերենից թուրքերենին անցած բառերի քննությանը, որոնք ոչ թե գրքային կամ գրական փոխառություններ են, այլ դրացիական հարաբերությունների ժամանակ հայերից տեղական թուրքերին անցած ամենաանհրաժեշտ կենցաղային, առտնին իրերի, բույսերի, տան կահավորմանը վերաբերվող իրերի, գործիքների անուններ են, որոնց հոմանիշները շատ դժգոհությամբ բացակայում են թուրքերենի բառապաշարում: Այս առավելության շնորհիվ էլ նրանք կայուն տեղ են գրավել ոչ-գրական թուրքերենի խոսակցական տարածքային բարբառներում: Մեծ մասամբ ուշադրություն է դարձվել գրական լեզվին անցած փոխառությունների վրա, իսկ բարբառներին անցած փոխառությունները մնացել են տեսադաշտից դուրս:

Այստեղ կարող է օրինական մի հարց բարձրանալ. ինչպես պատահեց, որ թուրքերենը դիմեց հայերենի օգնությանը այնպիսի մի ժամանակ, երբ հայերը կամ արդեն չկային կամ այնքան էին նվազել թուրքիայում, որ տեսակարար կշիռ չունեին: Մինչդեռ թուրքերենի բառարաններում հայկաբանությունները գնալով շատանում են:

1930-ական թվականներին սկսվեց «հարազատ թուրքերենի» (մաքուր թուրքերենի) ջատագովների շարժումը, որոնք թուրքերենից դուրս էին շարժում ոչ թուրքերեն՝ արաբերեն և պարսկերեն բառերը (ֆարսի)՝ փոխարենը ժողովրդական-խոսակցական լեզվից վերցնելով «թուրքերեն» բառեր, որոնք էլ, վերջին հաշվով, հայերեն ծագում ունեցող բառեր դուրս եկան: Այս հայերեն բառերն արդեն բազմաթիվ հարյուրամյակներ դարձել էին թուրքերենի ժողովրդական բարբառների անքակտելի մասը, որտեղից էլ սկսեցին ներմուծվել գրական ու գեղարվեստական գրականություն մեջ: Ուրեմն հայկաբանությունները «նորաբանություններ» չեն թուրքերենի համար, այլ անհրաժեշտությունից խոսակցական լեզվից գրականի մեջ կյանքի կոչված բառեր:

Իներկա հոգվածի նպատակը միայն հայերենից թուրքերենին անցած փոխառությունները քննելը չէ, այլև պարզել ընդհանուր լեզվաբանական մի շարք հարցեր, որոնց պատասխանը լեզվաբաններին միշտ էլ հուզել է, և կամ այդ հարցերը մնացել են անպատասխան ու հանելուկային: Ահա այսպիսի հանելուկային հարցերից մեկն էլ ծածկալեզվի՝ արգոյի կամ պայմանական լեզվի առաջանալն է յուրաքանչյուր լեզվի մեջ: Ի՞նչ ակունքներից է սնվում արգոն, ինչպե՞ս է այն դոյանում և ո՞րն է նրա գոյատևման պայմանը: Մեզ թվում է՝ թուրքերենի՝ հայերենից կատարած փոխառությունների միջոցով հնարավոր է պարզել արգոյի՝ ծածկալեզվի, առաջացման ուղիներից մեկը և թերևս՝ ամենագլխավորը: Ահա թե ինչպես: Թուրքերենի բառարաններում բազմաթիվ հայերեն փոխառությունների դիմաց դրված է argo (ծածկալեզու) կամ պայմանական լեզու՝ ժանթթադրությունը, իսկ երբեմն էլ թուրքերեն mecaz «փոխաբերություն» նշումը, սակայն, առանց հղելու դրանց հայերեն ծագումը: Պարզվում է, որ դրանց մեծ մասը ծագումով հայերեն բառեր են:

Այսպես, օրինակ, «Թուրքերեն-ոտսերեն» բառարանը (Բասկալով և դործընկերներ) նշում է oski «լիրա» (թուրքական դրամի միավոր) բառի դիմաց argo⁴, որը հայերեն ոսկի բառն է, որ արևմրտահայերենի բարբառներում ունի օսկի հնչումը (այն գործ է ածվում «լիրա, դրամ» նշանակությամբ)⁵, որտեղից էլ անցել է թուրքերենի խոսակցական լեզվին, ապա՝ գրականին: Հայերեն ավանակ՝ «էջ, հիմար» բառը թուրքերենում գործ է ածվում նույն՝ avanak ձևով և ունի «հեշտությամբ համոզվող և խաբվող մեկը, հիմար» նշանակությունները: Նրանից կազմվել են նոր ձևեր՝ avanaklik (հիմարություն, դյուրահավատություն), avanakca (հիմարաբար, ապուշավարի), որոնց դիմաց բառարանները ոչ մի դեպքում փոխառության ակունքը չեն նշում, թեև գործածվում են դրանք որպես ծածկալեզու:

Թուրքերենի բարբառներում և գրական լեզվում գործ է ածվում angul կամ angit՝ «հիմար, ապուշ» բառը, որը փոխառյալ է հայերենից և նշվում է որպես argo⁷: Անշուշտ թուրքերենում նրա ժխտական ան- ածանցը չի գիտակցվում, բնական է, որ չի գիտակցվում նաև նրա արմատը գե՞տ-ն է, թե՞ կուտ, անկո՞ւտ, թե՞ անգլետ ձևից, թերևս կա նաև բաղարկության պահը:

Հայերենի բազմաթիվ բարբառներում օսկոր՝ առկոր, բառ ունի նաև «կաշառք»⁸, նշանակությունը, որն այս նշանակությամբ էլ անցել է թուրքերենի բարբառներին: Derleme sözlüğü բարբառային բառարանը տալիս է oskor (և oskur) բառի «կաշառք» բացատրություն⁹:

Հայերենի բազմաթիվ բարբառներում, ինչպես օրինակ, Վա-նի, Ակնի, Պոլսի, Ադանայի և այլն, ներմակ-նուր նշանակում է «օղի»¹⁰: Նույնությամբ այս արտահայտությունը, որ հայերենի ծածկալեզվից է փոխառված, գտնում ենք թուրքերենում carmak, carmakçur (նարմակ-նուր) ձևով, որը որպես argo տրված է Բաս-կակովի և գործընկերների բառարանում¹¹: Թուրքերենին հատուկ ձայնավորների ներդաշնակության օրենքով հայերենի ներմակ բառը ետադարձ առնամանությամբ վեր է ածվել նարմակ-ի, ուր և ձայնավորը ա-ի ազդեցությամբ դարձել է ա: Երբեմն օգտագործվում է միայն carmak-ը՝ carmekçur-ի փոխարեն:

Հայերենի մոռուֆ բառը թուրքերենում դարձել է ծածկալեզվի բառ moruk ձևով, սակայն ձեռք է բերել «զառամած, ծեր, քոփակ, մեկ ոտքը գերեզմանում»¹² նշանակությունները. գործ է ածվում նաև բայական ձևով moruklaşmak, moruklaşmak՝ «զառամել, խարխլվել, քայքայվել» նշանակություններով¹³: Այս բառն էլ բառարանները նշում են argo-ի տակ:

Հայերեն երթալ բայի հոգնակի առաջին դեմքը՝ երթանք, թուրքերենում դարձել է ertak՝ «դե, զնանք, շարժվանք, հայդա» նշանակությամբ և որպես ծածկալեզվի բառ նշում են թուրքերենի բառարանները¹⁴: Հայերեն մատ բառից բարբառներում ունենք մատիկ ընել կամ մատ ընել, մատ խառնել, մեջը մատ ունենալ, մի մատ մեղք անել և այլ արտահայտություններ, որոնք էլ փոխանցվել են թուրքերենին madik՝ «խարդավանք, մեքենայություն, նենգություն, բանասարկություն, գավ, խորամանկություն» նշանակություններով և հետևյալ դարձվածներով՝ madik almak, madik oynamak, madik etmek՝ «խարդավանել, նենգել, մեքենայություններ անել», madik yutmak՝ «ծուղակը, թակարդն ընկնել, խաբվել, կա նաև madikci՝ «խարդախ» բառը, որոնք բոլորն էլ գործ են ածվում որպես ծածկալեզու¹⁵: Եվ այսպես կարելի է բերել ևս մի քանի նման օրինակներ:

Քանի որ հայերենից վերցված մի շարք բառեր թուրքերենում ենթարկվում են բաղադրության և ընկալվում են որպես «թուրքերեն» բառեր, այստեղ կփորձենք քննել նման մի քանի բառեր: Հայերենի տաղավար՝ «հյուղ, վրան, մացառով, շինված խրճիթ»¹⁶ բառը թուրքերենում հնչում է dālavār, dālvār, այսինքն՝ ենթարկվում է կոնտամինացիայի որպես թուրքերենի dal՝ «հյուղ» բառից և -avr ածանցից կազմված մի ձև, որի բացատրությունը պրևի բառացիորեն նույնն է հայերենի հետ՝ «վրան մացառով ծածկված այդու, բանջարանոցի հյուղ, խրճիթ»¹⁷: -var ածանցը թուրքերենում առկա է բազմաթիվ բառերում, օր. bülbüvar՝ «սոխակավարի», ümitvar՝ «հուսով, հուսալից» կամ canavar «գայլ, գիշատիչ զազան» և այլն: Թեև այն պարսկերենից փոխառյալ ածանց է, սակայն պիտակցվում է թուրքերենում և բառն ամբողջությամբ ենթարկվում է որպես թուրքերեն:

Թուրք հեղինակներն իրենց ուսումնասիրություններում նշում են բազմաթիվ հայկական պարերի փոխանցումը, իրենց անուններով հանդերձ, որոնց մի մասի անվանումը նույնպես ենթադրվում է որպես «թուրքերեն» արմատից կազմված ձև: Հայկական Հոյնար, ենթարկվելով բաղադրության, դարձել է Oynar, այսինքն՝ պիտակցվում է որպես թուրքերենի oynamak՝ «խաղալ, պարել» բառից կազմված oynar՝ «շարժուն, շարժվող» մի ձև¹⁸:

Հայերենի ժամկոչ բառը դարձել է zangoç. ուր ժամ բառը փոխարինվել է զանգ-ով, որը ծանոթ է թուրքերին zeng՝ «զանդ», zengele, zengel՝ «զանգուկակ, զանգակիկ» պարսկերեն ձևերից: Zangoç-ը արդեն ոչ թե «ծամ հրավիրող, եկեղեցի կանչող», այլ «ծամհար, եկեղեցու զանգ հնչեցնող»¹⁹ իմաստով է պիտակցվում: Ավելի ծիծաղելի, անհեթեթ բաղադրության է ենթարկվել այս բառը Գաղիանթեպի բարբառում, ուր այն հնչում է camgöç²⁰, որ կարելի է թարգմանել՝ «ապակյա աչքով»:

Շատ հետաքրքիր է «մաքուր թուրքերենի» շատագույների բռնած դիրքը, երբ հարկադրված իրենց բարբառներից բառեր են փոխ առնում: Սովորաբար նման բառերի ծագումը նրանք չեն նշում բառարաններում: Մինչդեռ դրանք ստուգաբանվում են միայն հայերենով: Այսպես, օրինակ, թուրքերենի բարբառներում (Կարս, էրզրում, Օլթի, Բայբուրդ, Սարիկամիշ) girgit (1) նշանակում է «գծուծ», իսկ նույն էրզրումում և Օլթիում girgit (11) նաև՝

«միջուկը դժվար ելնող ընկույզ»։ Բլուր-Փուլուրի բարբառում այս բառը հնչում է kirkit, ալլուր՝ girkit, gırgıt (I) և նշանակում է «գործվածք կամ զորդ գործելիս հանգույցը, կապը պնդացնող մի տեսակ սանր»²¹։ Նույն նշանակություններով այն առկա է հայերենի բարբառներում՝ կրկուտ՝ Սասնո բարբառում ֆարֆր՝ «սանրաձև երկաթ, որով փալաս գործելիս ծեծում են, թելերը նստեցնում», նաև ֆարկիթ՝ «դժվար կթվող անասուն», այլ բարբառներում՝ կրկիտ ընկույզ՝ «միջուկը դժվար ելնող, պինդ ընկույզ»։ «Կրկիտ բռնիր, որ ձեռքիցդ չընկնի»։ այս ամուր, պինդ, կարծր, սեղմող նշանակություններից էլ առաջացել են «գծուծ, կծծի, ժլատ» նշանակությունները²²։ Կա և հայերենում կրկել՝ «կուլ գալ, սեղմվել, պնդանալ» նշանակությունները, որոնց արմատն է կրկ՝ «պինդ, սեղմ, ամուր, կծկված»։

Մեկ այլ՝ կովի արմատից քակը, քակիչը հայերենի բարբառներում կոչվում է նաև կովիչ, կովիին, կեփին, կիփին, կափլն, գործ է ածվում «ուրազ, թակ», «լվացքի թակ», «տոփան», ինչպես նաև «գորգագործների սանրաձև թակիչ» (կուփիճ) նշանակություններով, որն անցել է նաև թուրքերենի բարբառներին kōpūç, «լվացքի թակիչ»²³ ձևով։

Կասկած չեն կարող հարուցել նաև թուրքերենի gōr (II), «թոնրի կող»²⁴ բառի առնչությունը հայերեն կող-ի հետ, ինչպես նաև tapon՝ «հնացած, անպետք, նետվելիք, մոգայից ելած»²⁵ բառի կապը հայերենի քափոն-ի հետ և այլն։

Հոգվածի շրջանակներում հնարավոր չէ բոլոր բառերը քրեանության ենթարկել, ուստի մենք կբավարարվենք ստորև միայն նորահայտ հայկաբանությունների ցուցակը տալով, որոնք քաղված են գերազանցապես թուրքերենի բարբառներից։

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, ԳՅՈՒՂԱՏՆՑՍՈՒԹՅՈՒՆ, ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

cirmar 2 (DS, 1188) — արտը ջրելու համար րացված առու-ջրմար (ԲՄԳ, 486)

pulur 1 (DS, 3485) — փոքրիկ բարձունք, բլուր-բլուր

goru 3 (DS, 2106) — վրան բաց փորված առու-կորի (ԳՔ, 599)

gorut 2 (DS, 2*06) — մարգերը բաժանող թմբեր-կոռուկ (ՀՔՔ, 363, ՍՔ, 79)

gagcin, gajgin (DS, 1895) — կավ, կավային հող-կաղնի, կաղնի, կաղնի (ԲՄԳ, 296 ՀԱՔ, 2, 496)

- gor (DS, 3471) — խոնավ ժամանակ պինդ, չոր ժամանակ կրային հոռ-պոռք (ԳՔ, 922)
- per III, pere III (DS, 3427) — տավարի կթվելու տեղը (աղբը) — բեր (ԳՔ, 182)
- put, put, vermek (DS, 3492—3) — բուստ, բուսելու տրված անասուն-բուստ. բսել (ԳՔ, 206), շՔՔ, 687)
- mirik III, mirik VIII (DS, 3185, 3187) — մանր հարդ, դարման — մրեզ (ԳՔ, 802)
- öre (P, 108) — չրադացից պատերին թռած ալյուր-ուրվա (ԲՍԳ, 451), օրա (ՇՔՔ, 185)
- göşgöş I (DS, 2107) — փոքրիկ շրվիժ-դռչվաճ, գոճան (ԳՔ, 249—250)
- pulul II, pulur (DS, 3455) — քաղած խոտի կաս արտի դեղ-փուլուկ, փլուլ, բուլուկ, բլուլ (ԳՔ, 180, ՇՔՔ, 101)
- golol (DS, 2168) — կաղամբի կոթուն-կոթուլ (ԳՔ, 524)
- las, last (lord) (DS, 3065, 3067) — հեձած խոտի կույտ-լաս, լաստ (ԳՔ, 412)
- pipik (DS, 3457) — կոկոն, բողբոջ-պպուկ (ԳՔ, 927)
- orlul (DS, 3290) — խաղողի էտած և չորացած ալյուր-որլյուտ, օրթա, որթ լալտ (ԳՔ, 863)
- öd II (DS, 3309) — խաղողի էտած ճյուղեր-յոտ անել (ԳՔ, 307, տե՛ս օրթոտ)
- picik II (DS, 3451) — ծառերի նուրբ արմատները-պիցիկ, պցիկ, բուցիկ (ԳՔ, 916)
- patlıç (DS, 3410) — կանաչ լոբի-պատիճ, պատուն (ԲՍԳ, 464)
- marh (DS, 3129) — ճրաղ կղնուց-մարխ (ՇՔՔ, 469)
- cambut, cobut I (DS, 993) — կարճ ամուր մահակ-նպտո, ճիպտո
- morç, morş (DC, 3210) — ղալար ծիլ, ճյուղ-մորճ, մորճիկ (ԳՔ, 744)
- lorolu (lor+olu) (DS, 3093) — չրերի եզերքներին բուսնող խոտ-լոր. լոռ (ՇՔՔ, 2, 308)
- goşkoz (DS, 2107) — հերկելուց դուրս եկող շահանակաձև արմտիք կոնդեզ (ՇՔՔ, 356)
- pisal, puşa (DS, 3448) — փշառ-փշատ (ԺՇՔՔ, 4, 655)
- gican II, gican (DS, 2025, 2074) — եղինջ-կեճան (ԳՔ, 579)
- cogabır I (DS, 994) — կանաչ կեղևը շահանած ընկույզ-նոպուր (ՇՔՔ, 439, ԳՔ, 723)
- mev I (DS, 3174) — որթատունկ, խաղողի բունը և ճյուղերը-մով (ԳՔ, 793)
- marseni (DS, 3130) — մասրենի-մասրենի (ԳՔ, 462, մասրիկ, ԳՔ, 765)
- orım, orum V (DS, 3288, 3290, 3487) — արտերում աճող վիսսատու բույս-որում (ԳՔ, 814)
- mermeni, mormanı (DS, 3902) — մոշ, մորենի-մարմենի (ԲՍԳ, 411)
- mora I, mor II (DS, 3203) — մոշ, մոր-մոր (ԳՔ, 793, 794)
- gogoş, gögöf, gogo I (DS, 2094) — կանաչ կեղևից շիւած ընկույզ-կեղովիկ (ՇՔՔ, 472)

- glgof (DS, 2036) — *հասունացող բնկույզի կանաչ կեղևը* (ԳՐ, 538)
- gıya (DS, 2086) — *եղևնաղդիներից / փշատերևներից* մի ծառատեսակ-գի. գիհի (ԲՄԳ, 140)
- nivik, nevek (DS, 3293) — *թթվաշ տերևներից կերակուր պատրաստելու-եռիկ. նվիկ* (ԳՐ 516, ՆՐՐ, 506)
- pışpışik (DS, 3449) — *ուտելու խոտ-փշփշուկ* (ԳՐ, 1075)
- lalik II (DS, 3061) — *պոմիդոր, լուլիկ-լուլիկ* (ԳՐ, 431)
- horun dutu (P, 102) — *կարմիր, թթվաշ թուփ-նռռամ բույր. ուռումի բույր* (ԳՐ, 663) (ԲՄԳ, 347,
- pampik, pambuk (DS, 3387) — *բամբակ-բամբակ* (ԺՆՆՐՐ, 4, 606)
- post etmek (DS, 3472) — *փոցխ անել. փոզխել-փուզխ անել* (ԳՐ, 1082)
- manger, manker (DS, 3121) — *փայտե փոջխ-մանգեռ* (ԳՐ, 751—752, ՆՐՐ, 493)
- mara, maran III (DS, 3126) — *սալի միջի տախտակները-մառան (սալի անիվի մաքողական տախտակներ* (ԳՐ, 755)
- gerrap (DS, 2009) — *կալը տարածելու գործիք-կառափ* (ԳՐ, 553, ՆՐՐ, 361)
- nat (DS, 2241) — *գերանգու բռնակը-նաք* (ԳՐ, 303)
- nezik IV, nezük IV (DS, 3250) — *թելերը մալանշ ռարբող ճախարակի սարք-նազուկ* (ԳՐ, 303)
- pihirl (P, I, 82) — *ծխնկույզ, երգիկի անցք-բուխարի(կ). բիւրիկ* (ԳՐ, 194, 204)
- paia VI (DS, 3408) — *թոնրի մեջ հաց թխելու հարմարանք-փաքաք. բազաղ* (ԳՐ, 1060)
- laran (DS, 3096) — *մազից սարքած պարկի կապ-լարան* (ԳՐ, 412)
- pedrik II, pedirik (DS, 3419) — *մաքրած, սանրած, ոլորելու վիճակի հասցված բամբակի քուլա-պատրույզ* (ԳՐ, 902)
- perdic, pardüc II (DS, 3896, 3498) — *փոքի թոնրի պատերը մաքրելու կտավի կտոր՝ ձողի ծայրին-փառտիշ* (ԳՐ, 1065)
- göre I (DS, 2158) — *երկաթագործի փուքս-խուրա* (ԳՐ)
- pov III (DS, 3476) — *սուրճ բովելու կավե աման-բով* (ԳՐ, 202)
- musur III, murus, musiuk VI (DS, 3222, 8228) — *կերի տախտակե աման-մուսուր, մուսուր անել* (ԳՐ, 493)
- plz (DS, 3464) — *ծայրը սրած երկաթե խթան-քիզ*
- lambak (DS, 3062) — *կանթին կապված պարան-լամբակ. լամբակ* (ԳՐ, 403)
- put II (DS, 3492) — *առորի երկաթը խոփին միացնող կեռ, սեպ փուր* (ԳՐ, 1082)
- nara III, narl II (DS, 3239) — *մուրճի սուր կողմը-նարեկ* (ՆՐՐ, 500)
- egan (DS, 1672) — *հունձը մարաք հրելու հարմարանք-եղան* (ԳՐ, 293)
- ling II, link I (DS, 3080) — *հանելիք-լինգ* (ԳՐ, 423, ՆՆՐ, 3, 450—451)

- mazi I, mazu (DS, 3145) — սալի երկու անիվները կապող ամուր փայտե սոնձ-
ժազի, մզկի, (ԳՐՔ, 703)
- İoliklemek, İolikleumek (DS, 5088) — ուրեմի, փաթաթել- լուկի, լուիկ, լուկ
ցնել (ՀԱՔ, 2, 292, ԳՐ, 431—432)
- palavara I, palavra (DS, 3384) — դռների կամ լուսամուտների վերևի հաստա
տուն փայտը-բալավար, բավար (ԳՐ, 101, ՀՐՔ, 81—2)
- purut, purutcu (DS, 3488) — հողից պատրաստված ամանեղեն-բուրտ (ՀԱՔ, 292)
küle (P, 105) — բամբակի փիթա-հուլա (ՀՐՔ, 145, 677)
- kemos (ԻՂ. 104) — բամբուկ, բոնակով պղնձյա աման-համոց (ԳՐ, 1094)
- sarat (P, 37, 109) — մադերից ամենախոշոր անցքովը-սարատ (ԳՐ, 954, ՀՐՔ,
583)
- corik (DS, 1001) — անծորակ ցիկկապատ կուլա-նորիկ, նոռիկ, նոռի, նոռիկ,
նոռակ, նոռնիկ (ԳՐ, 730, 733)
- puğ g (DS, 3439) — կավից ջրի սափոր-բղրղիկ (ԳՐ, 914)
- punik, punuk (DS, 3441, 3486) — ձեռքի փոքր կողով, սապատ-պունիկ (ԳՐ,
926 բուննիկ (ԳՐ, 225)
- galat II (DS, 1899) — մրգի երկոտանի կողով-կաղաք, կալաք (ԳՐ, 541)
- örök IV, öreke (DS, 3344) — örog VII) — իլիկ-օռոֆ, ոռֆ (ԳՐ, 949)
- poduç (DS, 3466) — ջրի փոքրիկ սափոր, երկկանթ-պոսիճ (ԳՐ, 923)
- nügü I (DS, 8257) — լափի միավոր՝ նուկի-նուկի (ԳՐ, 816)
- pipic (DS, 3475) — դուղուկ-պիպիչ (ՀՐՔ, 558)
- çokalı, çokal IV (DS, 1259) — կավե կաթսա-նուկնալ (ԳՐ, 731)
- puçuk (DS, 3482) — փուշիկ, փամփուշտ (ԳՐ, 1083)
- mırmırık (DS, 3203) — խաղողի օղի լցարձած հյութ-մոմոուկ, մոմոիկ (ԳՐ, 799)
- los II, loj (DS, 3088, 3089) — կավե կաթսա-նուկնալ (ԳՐ, 731)
- macar III (DS, 3098) — կարմիր բաղուկից և մասուրից պատրաստված թթու-
մանառ (ԳՐ, 74)
- mat V, 2, mit III (DS, 3135, 3225) — թանձր դռնաք, մաթ-մաք (ԳՐ, 742)
- şilkam, şivkam (P, 110) — խաղողի շիվերի մզվածքը-շիվֆամ (ԳՐ, 830)
- mazin II (DS, 3145) — մածուն-մածուն (ԳՐ, 744)
- racık (DS, 3505) — բնկույզով սուղուխ-ռոնիկ (ԳՐ, 948)
- gaga (DS, 1892) — միդդ և լոր միդդեր-կակա (ԳՐ, 540)
- gij (DS, 2037) — սալորի և ծիրանի ծառերի խեժը-խեժ (ՀՐՔ, 278), խիժ (ԳՐ,
468—469)
- nor, nur (DS, 3255) — նոր պանիր-նոր
- papa II (DS, 3392) — հաց (մեկ.)-փափա (ԳՐ, 1066), բաբա (ՀՐՔ, 649)
- ail 1, 2 (DS, 3079) — գետի բերած տիղմը-լիլ, լեկ, ևկ (ԲՍԳ, 327)

- mlj (DS, 5196) — մշուշ, մեղ, մառախուղ-մեծ (ՄՔ, 145)
 puk, pük (DS, 8494) — բուք-բուխ (ՀՔՔ, 114)
 ıorpuz, pirpoz (DS, 3444, 3970) — բորբոս-բորբոս (ԳՔ, 203)
 mirik, mirrik (DS, 3188, 3189) — մրուր, նստվածք-մրրիկ, մրրուկ (ՀՔՔ, 495)
 murur (P, 107) — խաղողի շիրալի տականքը-մրուր
 lak II, lak (DS, 3059) — փշաքած ձու, սեխ-լակ (ՀՔՔ, 235, ԳՔ, 407)
 potot II, potik (DS, 3474) — խալ մթգի տոտիպոլիունը բերանում-փոքոր, փաթիկ
 (ՀՔՔ, 69, ԳՔ, 1075)
 gad (DS, 2187) — այրված հոց-կոտ գեւալ (ԳՔ, 607)
 par I, per IV, por I, pur IV (DS, 3314, 347, 3169, 3457, 3496) — փառ,
 թաղանթ-պար, փառ (ԳՔ, 902, 1064)
 giliz II (DS, 2078) — փսլիներ, լորձ-գլեգ, կլեգ (ՀՔՔ, 314)
 gucur I (DS, 2187) — փոքր, կարճահասակ-կուճուր (ԳՔ, 604)
 catik (DS, 1193) — ձկույթ մտտ-երիկ, չքիկ, երբիկ (ԳՔ, 713), չքիկ (ՔԱԳ, 455)
 pirtik I (DS, 3160) — բրբրված շորի պատահիկ, ցնցոտի-փրփիկ, փռաիկ, փռա
 րիկ, փռուուկ (ՀՔՔ, 663, ԳՔ, 1037)
 cıplık I (DS, 983) — պստիկ-ծիպուկ, ծիպ (ԳՔ, 515)
 cillot (DS, 11) — թշվառ, աղքատ, սոված-չլուա, շլեւ (ԳՔ, 881)
 potik I (DS, 3473) — կարճահասակ-փոթիկ, փոթ (պոշատ) ԳՔ, 1075)
 gop I (DS, 2102) — աւթէ, կոնատ-կոպ, ղոպ (ՀՔՔ, 358)
 iotl (DS, 3088) — որկրամուլ, շատակեր-լոթի, լոթ, լոթո (ԳՔ, 430)
 lokko I (DS, 3094) — շատ գեր, անճոռնի-լոճո, լոճ, լոգ (ԳՔ, 440, ՀՔՔ, 258)
 pırçık, pırçek, pırç I (P, 109, DS, 3441) — մաղափունջ, արմատենք-փուչիկ, փուռ;
 (ԳՔ, 1084, 86)
 pert II, 3, pirtik II (DS, 3432, 360, 3470) — մսի փերթ-փերթ (ԳՔ, 1075)
 pogan (DS, 3466) — փողոց-փողան (ԳՔ, 1077)
 dindin (DS, 1463) — դանդաղաշարժ, տետեալ-դեղնալ (ՀՔՔ, 518, ԳՔ, 1037)
 çistik (DS, 986) — կոշիկ, շտիկ-շտիկ (ՀՔՔ, 4, 144)
 cıbrıt, cıbrıt (DS, 926) — ալթի ճպուռ-նպոտ, երպոտ (ԳՔ, 734, ՀՔՔ, 448)
 ceg I (DS, 870) — կողով հյուսանու ծեղ-ծեղ (ՀՔՔ, 306, ԳՔ, 511)
 cov (DS, 1004) — բրնձի փոքրիկ կապ-չով, խուրձ կապելու կեմ (ԳՔ, 939),
 merl V (DS, 3169) — էդ կաքավ-մարի
 murzu ballık (DS, 3212) — մուրզա ձուկ-մուրզա, մուրզի, մուրծա (ԳՔ, 797,
 ՀՔՔ, 491)
 moz (DS, 3212) — մեծ ճանճ-մոզ (ԳՔ, 789)
 oşık, 0şık (DS, 3356, 3292) — շեիկ-օշիկ (ԳՔ, 1135),
 maçl II (DS, 3100) — կատու-մաշո (ԳՔ, 754)

plpı V (DS, 3457) — փնդկահա՛ւ-պիպի (ԳՔ, 910)
 pın II (DS, 3454) — աբաջի-փին (ԳՔ, 1070)
 puç IV (DS, 3452) — գուլպա-բուն (ԳՔ, 205, շՂՔՔ, 117)
 gölü II (DS, 2095) — կոլոտ, կարճահասակ-կոլոտ (ԳՔ, 585)
 lipiz 1, 2 (DS, 3058) — տկեր-լպուզ (ՂՔՔ, 259, ժՂՔՔ, 2, 427)
 put olmaq (HS, 3491), plı (3448) — բռթ, բթանալ-բուր (ժՂՔՔ, 1, 349)
 p lık, p lık (DS, 3448, 3492) — քիւ, փոքրիկ-պտիկ, պուտիկ (ԳՔ, 926, 930)
 mal IV (DS, 3135) — ապշել-մաք մնալ (ՂՔՔ, 454)
 lıhçor (DS, 3077) — կեղտոտ, փնթի-լոճոր (ԳՔ, 428)
 lap II. lep I (DS, 3064, 3073) — թաթ, ափ-լըփ, լափ, լըպ (ԳՔ, 422, 423, 439)
 perk I, II (DS, 3130) — ամուր, ձիդ, ուժեղ-պիրկ (ժՂՔՔ, 4, 203)
 gıg, gı II (DS, 2036) — կենդանիների կղանք-կղ, կղկղաճ կղանոց, կղառ (ԲՄԳ,
 305)
 gıjık II (DS, 2037) — կարիճի կիճ-կիճիկ, կիճ, կիծ (ԳՔ, 569, 579)
 gej (DS, 1971) — ուղեղի շշմած վիճակը-գեծ (գեծոն) (ՂՔՔ, 131)
 lallık III, lallık (DS,) — անլեզու, համը-լալիկ (ԳՔ, 406)
 pompul, pumpul (DS, 3468, 3185) — թուռնների գաղաթի փունջը-փմփուլ դիտին
 թողած գաղաթափունջ
 pınpul (DS, 4186) — թուռնների մազը-քմքուլ
 pala't, fala't II, III (DS, 3382) — քուլա-քուլա-պալակ-պալակ (ԳՔ, 890)
 gıllık III, gıllık (DS, 2078) — փոքրիկ, մանրիկ-կիլիկ, կլիկ (ԳՔ, 573)
 mı'al I, megel II (DS, 3103) — զաշտում, արտում ոլխարի հանգստանալու
 տեղը-մակալ տալ, մաղալել (ԳՔ, 746, ՂՔՔ)

NERSES MKRTCHIAN

ARMENISMS IN THE TURKISH DIALECTS

Though the number of the Armenians in Turkey is decreasing, the quantity of Armenian words is increasing in the dictionaries of modern Turkish language.

The apologists of „pure Turkish“, rejecting Arabic and Persian words, replace them by words taken from the Turkish dialects. But as a result it very often turns out, that these words are of Armenian origin. As nomadizing people who recently came to a settled way of life in historical Armenia, the

Turks had to borrow hundreds of words from the languages of settled people living in the neighbourhood, including the Armenian language.

Some of these loan-words has been contaminated, for example: *dala vār* (from Arm. *talavar*), *dal* „branch“, *zangoç* (from Arm. *jamkoč*—*zang*), *Oynar* (the name of a dance from Arm. *Hoy Nar*) Turk. *oynamak* „to play“ etc,

Other borrowings from Armenian language have turned into slang expressions (argot), for example: Arm. *voski* („a gold coin“)—Turk. *oski* „lira, mani“; Arm. *cermak* *şur* („white water“)—Turk. *carmak şur* „vodka“; Arm. *voskor* („bone“)—Turk. *oskor* „bribe“: Arm. *moruk*—Turk. *moruk* „old man“.

In conclusion, a list of newly revealed Armenian words which are in daily use in the Turkish dialects is subjoined.

Մ Ա Ն Ո Ք Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

1 Հ. Անադյան, Թյուրքերենի ազդեցությունը հայերենի վրա. Թյուրքերենի փոխառյալ բառերը հայերենի մեջ, էմինյան ազգագրական ժողովածու, հատոր Բ, Վաղարշապատ, 1902:

2 Հ. Անադյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, 1951, Երևան, էջ 282 (այսուհետև ՀԼՊ):

3 Հ. Անադյան, Հայերեն արձատական բառարան (ՀԱԲ), 1—4, Երևան, 1971—1979,

4 Турецко-русский словарь (TPC), М., 1977, с. 694:

5 Կ. Գաբրիլյան, Բառգիրք Սերաստիո գաղառալիզուի (ԲՍԳ), Երուսաղեմ, 1952, 443, 586,

6 TPC, с. 77:

7 TPC, с. 55:

8 Հ. Անադյան, Գաղառական բառարան (ԳԲ), Թիֆլիս, 1913, էջ 855: Նաև՝ ԲՍԳ, 444,

9 Derleme Sözlüğü (DS), Ankara, էջ 3291,

10 Հ. Անադյան, ԳԲ, 712,

11 TPC, с. 145, *carmak şur* բառը է горькая водка:

12 TPC, с. 633.

13 TPC, с. 633.

14 Կ. Գաբրիլյան, Բառգիրք Սերաստիո գաղառալիզուի, Երուսաղեմ, 1952 (ԲՍԳ), էջ 391—392,

15 TPC, с. 594.

16 Ն. Անաոյան, ՀԱՐ հ. 4, էջ 363—364,

17 DS, էջ 1339.

18 TPC, c. 696.

19 TPC, c. 942.

20 DS, էջ 883.

21 DS, էջ 2086, 2083, 2084, նաև՝ *Hamit Zubeyr Koşay*, Pulur, Turk Tarih Kurumu Basimevi, Ankara, 1977, էջ 32, 107.

22 Ս. Ամասունի, Հայոց բառ ու բան (ՀԲԲ), Վաղարշապատ, 1913, էջ 379, ԳԲ, էջ 625, ԲՍԳ, էջ 323, Ժամանակակից Հայոց լեզվի բացատրական բառարան (ԺՀԼԲԲ), Երևան, 1980, հ. 3, էջ 226, Ս. Պետոյան, Սահնդ բարբառը (ՍԲ), Երևան, 1954, էջ 165, Ս. Կարապետյան, Սահուն, Երևան, 1962, էջ 200, Ծ. Սարգսյան, Բալու, Գահիրե, 1932, էջ 401.

23 *Hamit Koşay Zubeyr*, Pulur, էջ 105.

24 DS, էջ 2094.

25 TPS, էջ 827, TS, էջ 736.